


N1159

881-99-82  
2-78

968-408  
2

Σ. ΚΑΙ ΤΡΑΠΕΖΟΓΟΥΛΙΣΤ ΣΑΣΚΟΥΣΤΗ.

БИБЛЮОГРАФИЯ  
ИНСТИТУТА  
ПОСТОНОВЛЕНИЯ  
АКАДЕМИИ НАУК  
СССР



Σταύρωση της Ελληνικής Δημοκρατίας  
Δεκέμβριος - Δεκέμβριος 1927.

891.99-82  
Z-75

72/131

Ca M  
250

891.33-82  
2-75

1928A171  
- 6 NOV 2011

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՐ

**ՀՅՈՒՍԽ-ԿՈՎԿԱՆԻ ՊՐՈԼԵՏԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՍՍՈՑԻԱՑԻԱՆԻ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՏԻԱՆ**

ՀՈԿՏԵՄԵՐԵՐ

ԽՄԲԱԴՐՈՒԹՅԱՆԻ  
ՅԵԶԵԿ Խ.-Դ.



ՀՅՈՒՍԽ-ԿՈՎԿԱՆԻ ՊՐՈԼԵՏԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՍՍՈՑԻԱՑԻԱՆԻ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՏԻԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

1927 թ.

ՀԻՅԱԼԻ ՀԵՂԿԱ  
ԻՆՍՏԻՎՈՒԴ  
ՌԵՇՈԽԱՎԵՆԻ  
Ակադեմիա Խայ  
СССР

## ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ներկա ժողովածուն բացառապես Հոկտեմբերյան հեղափոխության ծնունդ է յել պատահական չե, վոր նա կրում է «ՀՈԿՏԵՄԲԵՐ» անունը:

Այսեղ տեղ գտած գրական աշխատանքները, 85-90 տոկոսով պատկանում են սկզբակ 2-5 տարվա գրական սաած ունեցող գրողների, վորոնի յել վաշ մի իրավակարգում չելին կարող յերեփակայել անգամ իրաց գրվածքների նման հրատարակության մասին:

Յերերաջին Կոմիտեի մամուլի բաժինը, «Մուրեն-Մանզադ»-ի խմբագրությունը ուշադրության առնելով նրանց մեծ մասի բանկարական յեկ գրուղական ծագումը, ինչպես յեկ մի քանիսի բանվոր լինելն, նրանցում նկատվող գրական ստեղծագործություններ տալու ընդունակությունները ավելի խրախուսելու նպատակով՝ հրատարակում է այն:

Անօւնը, Հյուսիսային Կոմիտասում բացի ժողովածուում տեղ գտած պրոլետ-գրողներից կան յեկ ուրիշ գուցե յեկ ավելի շնորհալի գրողներ, սակայն ժամանակի սղարյան հրատարակման ուս նախաձեռնության յեկ այլ որդեկտիվ պատճառներով նրանց բոլորի գրվածքներից որինակներ նախակերու ներառակություն չունեցալ խմբագրություն:

Հավանական է, նետագայում մենք ներառակություն կունենանք, նոր, գուցե յեկ ավելի նոխ ու զեղարվեստական համեմատարար բառն արժեք ունեցող գրական աշխատանքներ հրատարակելու:

Ինչ խոսք, վար ժողովածուում տպագրված նյութերը փոքր բացառություններով նաև արժանի յեն մեծ ուշադրության: Ավելին: Յետ հոկտեմբերյան գրական գործերի, մասնավորապես բանասելյանությունների մեջ, վորու պարզություն մացելուց բացի, նրանք ավելի մոտիկ են իրականության: Յեկ ընդհակառակը՝ նեռու մի նարվածով «Ժիեզերք դդրդացնող», ամպագուգոռ բառախաղություններից բացի վայել դասիստական փերեզակի հոգեքանությանք գրված մեջանական տատանման ու յերազանցների յեկ իդեալականացրած «բանասեղություններ»-ից, վորպիսներից դժբաղդպարա տուայմ շատ կան յեկ պրոլետ-գրողների գրական աշխատանքների մեջ:

Յելենով նյութերի բնօւյրից, յերե կոպիս կերպով բաժանենք նրանց, կրտսենենք, վոր ալիքնել յերգիլում և մեր գործարանը, ժիմարառությունը, մեխանիկացիալի յենքարկված յերերազործությունը, արեվելքի զարոնքը, դաստիարակային իդիոլոգիան յեկ պրոլետարիատի գաղափարական ու բարրիկադային մատը:

Միաժամանակ աներամետ եմ համարում շեշտել, վոր խրիստության, մենք զիխավորապես ուշադրություն ենք գարձել նյութերի հիմունիսկան ԿՈՂՄԻ ՊԵՐ ՅԵՐԵՎԱՆ ՎՐԱ, աչքարո շանելով ինարկե զեղարվեստական կողմք, վորքանով այդ կարելի յեր պահանջել մեծ մասամբ յերիտասարդ յեկ նեղափոխության ծնունդ գրողներից:

Донокрліт № 32-77. Ростов-Дон.  
Типография «Севкавиздат».  
Тираж 1.000 экз.



56 434-66



ԱԽՈՑԱՆ

### ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ՀՈՒՅԶՁԵՐ

Թողել եմ գյուղը հեռավոր, գյուղը զարթնող արևվառ,  
Թողել եմ ընկերներս բոլոր, դաշտերը հուրհան, անծայր:  
Յեկել եմ քաղաքն այսոր, քաղաքը նոր, աենդավառ,  
Կոմյերիտ հույզերով իմ նոր—բանֆակը մանելու համար:  
Հայրս գեղջուկ եր խղճուկ—մեռած, մոռացված գյուղի,  
Իսկ յես կոմյերիտ տղա, բոնել եմ լենինյան ուղի...  
Հայացքս հառել եմ հիմի դեպի բոցավառ գալիք,  
Սիրաս դառել ե վաղուց փոթորկվող, փրփրող ալիք...  
Հույզերս հուր են, վառվուռն, աշխատանք, բանֆակ, կոմվուզ.  
Կարո՞ղ ե մեկն ինձ արգելք լինել, կամքիս բանանալ թե կուզ...  
Յես կուզեմ կրծել գիտության զրանիսը, զրանիսը, հրկեղ  
Զան, յես միշտ ջահել եմ յեռանդուն, ընկերներնորից ձեզ պես:

## ԳՐԱՇԱՐԵՍ

Նվիրում եմ «Մայքլ-Մանգադ»  
թերթի գրաշար ընկերներին:

Գրաշար եմ գիտեք,  
Գրաշար եմ մրու.  
Գրաշար եմ չկարծեք թռափախոսու—  
Սիրոս  
Հուր,  
Հրան,  
Հրոս  
Կոմյերիս եմ,  
Համառ, կրակոս:  
Վողջ որը դազգի մոտ կանգնած,  
Դազգի մոտ վերստատկան ձեռիս,  
Հայացքս տառերին դարձրած,  
Տառերը ժպտում են դեմքիս:  
Շարում եմ,  
Ցեռանդով,  
Ցեռուն,  
Տողերը  
Խանդակառ,  
Խնդուն—  
Շարում եմ, ժպտում եմ հիմա  
Իմ վառ հույզերս այսորվա:  
Շարածիս ամեն մեկ տողում,  
Լենինն ե կենդանի խոսում.  
Բոցավառ ամեն մեկ խոսքում  
Ո՞ ինչեր, ինչեր են ասում:

\* \*

Ինչ լավ ե միշտ ջահել լինել,  
Միշտ ջահել՝ կոմյերիս ժպտուն—  
Աշխատանք ու քրտինք սիրել,  
Աշխատել յեռանդով յեռուն:

Ինչ լավ ե միշտ ջահել լինել,  
Մրտով միշտ ուրախ ու խնդուն—  
Որերի այս թափը սիրել,  
Նոր թափը պայքարով լեցուն:

Ինչ լավ ե ժամերովնստել,  
Մարքսի հետ վիճելու համար.  
Տարից առա «Կապիտալ» կարգալ  
Ամեն ինչ դիտելու համար...

Ինչ լավ ե միշտ ջահել լինել  
Միշտ ջահել՝ կոմյերիս տոկուն,—  
Որերի այս թափը սիրել,  
Նոր թափը պայքարով լեցուն:

## ԸՆԿԵՐՆԵՐԻ Ս

Բնկերներ, նամակ եք գրում,  
Նամակ եք գրում գուք միշտ ու միշտ.  
Զեր գրած նամակի ամեն մեկ տողում,—  
Ինձ եք հարցնում գուք միշտ...

Գրում եք, Ախոյ, ինչքան շուտ  
Հեռացար, մոռացար գու մեզ,  
Ինչքան փոխվել ես գու հիմա,—  
Բայց մենք, հիշում ենք դեռ քեզ:

Ճիշտ ե, ընկերներ, հեռու յեմ,  
Բայց սրաով մոտ եմ յես ճեզ.—  
Նորանոր ընկերներ գտած,  
Ավելի ուրախ եմ հիմա յես...

Յես գարձյալ նախկինն եմ, զիտեք,—  
Ախոն եմ, Ախոն ճեր կրակոտ.  
Սիրում եմ որերն այսորվա—  
Այսորվա որերն աղմկոտ...

Հիշում եմ ընկերներ, բոլորիդ.  
Հիշում եմ, հիշում հիմա—  
Ուրախ եմ, վոր դուք ել ինձ պես  
Պատրաստ եք մեծ կովին վաղվա...

Գրում եք, բջիջում հիմա  
Սկզբիմ խմբակ եք՝ կազմել.—  
Աբրամն ու կարոն յերեկ,  
Կարմիր բանակ են գնացել...

Մեր լագերը հեռու յե նրանցից.  
Մենք Դոնում, նրանք կուբանում. —  
Յերեկ նամակ ստացա—  
Աբրամն եր լագերից բարկում:

Ո, ինչպես, ինչպես չհիշեմ,  
Կրամնողարը քսանմեկ թվին.—  
Առաջին, առաջինը յեղա,  
Մասնակցող Լենինյան բանակին...

Կարսղ եմ, կարսղ եմ չհիշել  
Քսան մեկ, քսան մեկ թվին,  
Հորս խոսքերը գոեհիկ—  
Թվաց թե ինձ ապտակ տվին.

Հեռացիր, գոռաց, բաշեիկ լակոտ,  
Հեռացիր, մի արի ինձ մոտ...  
Ուզեց ինձ խփել, զիտեմ,  
Բայց նազան հանի նրա դեմ:

Վող գիշերը մայրս ինձ գրկեց  
Վող գիշերը հեկեկաց ու լաց.  
Վող գիշեր մայրս ինձ ինդրեց  
Մի սպանի հորդ, —ասաց...

Յես հիմա բանվոր-բայլշեիկ—  
Սրտումն հրաշունչ հույզեր,  
Յես հիմա կարմիր բանակում,—  
Կարմիր բանակում ընկերներ:

Կարմիր բանակում

**ԿԱՐՄԻՐ ԿՈՒԲԱՆ**  
(Հատկած)

Նորից յեկա վողջունելու  
Վառ դաշտերիդ արևակեզ.  
Դու ժպտում ես, ինձ հուզում ես,  
Ծուփ ու ծփան ալիքի պես:  
Յեկա այսոր նորից, նորից  
Մանուկի պես վառ ու խնդուն,  
Ու բերել եմ տապարանից  
Բորբ յերգերս արեվագուն:  
Յես յեկել եմ նորից լսեմ  
Հաղթ յերգերը բատրակների,  
Նոր աշխարհի հրով վառված,  
Վոր տալիս են միլիոններին,  
Միլիոններին կրակ ու կայծ:  
Ո՛, յեկել եմ նորից տեսնեմ  
Դաշտերը քո վառ ու անծիր,  
Գութանի տեղ արակտորներ,  
Տրակտորներ, վոր հերկում են  
Քո դաշտերը անծայրածիր:  
Յերբ տեսնում եմ, հիմնում եմ  
Գյուղերով քո վառ ու հրկեզ,  
Ուր վառվել են հազարագույն  
Զահերը վառ աստղերի պես:  
Ու խնդում ե աչքերիս դեմ  
Քաղաքդ մեծ,  
Բարձրաթռիչ ու բարձրականչ,  
Վորպես Մոսկով մի մեծ հսկա,  
Կամքով արի՝ կարմիր դարի:  
Ու անցնում ե փողոցներով  
Շեփորներով կրամնողարի  
Վառ յերգերով հոծ բանակը կոմսոմոլի,  
Ու թնդում ե կուռ շարքերում ձայնը նրանց  
Յերգերը վառ հոկտեմբերյան հրով վառված:

Նրանք գիտեն, վաղը նորից  
Մի մեծ կուկ պիտի լինի,  
Պաարաստվում են վառ հույզերով,  
Նոր գաղերով Ավիոքիմի:  
Նրանք գիտեն՝ վաղը նորից  
Ինչ վոր լինի ու ինչ լինի,  
Վերջին, վերջին, վերջին կովին  
Բողշիկը պիտի տիրի վողջ աշխարհին:  
Աղմկում ե ամենուրեք  
Կուբանովի զավողը մեծ,  
Ու կանգնած ե նրա առաջ  
Մեծ հանճարի արձանը մեծ:  
Յեվ կանգնած ե նրա առաջ  
Պողպատաճուլ արձանը մեծ,  
Տեմպ ե տալիս ամենուրեք  
Կուբանովի զավողին մեծ:  
Աշխատում են այնտեղ նորից  
Ընկերները իմ հին, նախկին,  
Դարբնում են մանուկ որից  
Հզոր կամքը աշխատանքի.—  
Բրանում են այնտեղ նորից  
Սեթոն, Սաթոն յերկաթակամ,  
Ո՛ խնդում են նորից-նորից,  
Կարծես նոր են ծնվել մորից:  
Այսոր յեկա, վոր հիմնամ յես նրանցով,  
Կարմիր կուբան, յերեկ զու չեյլիր արյունի ծով,  
Յերեկ զու չեյլիր քաղցից լացող:—  
Բայց զու այսոր արմի պես հուր ծփացող:

Խոստով—Կրամնողար 1927 թ.



Մ Ա Յ Լ  
(Նկարված Դեյլում—Հնդկաստան)

## ԿԱՐԱՎԱՆՆԵՐԻ ՆՈՐ ՅԵՐԹԸ-ՇԱՐՔԻՑ ԶԱՐԹՈՒՆՔԻ Ա. Ա. ԶԵՐԳԻ

Նորեն կելենմ բավ ուղտերիս կարավանը կրզարդարեմ,  
Արեվանար նակասու լայն, նամբխո դիմաց յես բաց կանեն.  
Մինչեւ Բուշիր, մինչեւ Բայրա, Հինդ ու Արաք նորեն կերպա,  
Հանդիպածու նամբորդին ու կարավանին սելամ կրտամ...

Կասեն նրանց—Ահա նորեն դառնում եմ յես արեվակեզ,  
Եմ յերկիրը արխական, փողջուններ եմ բերում յես ձեզ.  
Վաղջույններ եմ բերում յես ձեզ, Հյուսիսային յերկրներից,  
Վաղջունները նրանց տաք են մեր հնամաւ բորբ արեվից...

Նրանց նուժկու վաղջույնի մեջ, նրաբորբու նրանց յերգում,  
Բյուր սրեւ են ուրախ բնդում, փոսկու արժան է լուռ տեմու.  
Հազարամյա ըղբաների յեվ բոնուրյան կապանին ամուր,  
Նրանց յերգին չի դիմանում յեվ դառնում է փուր-փուր:

Յես բերում եմ նրանց սրտի հրաբուխը բոսորազույն,  
Վոր հրաբներ վառեմ ձեր մեջ հազարանուն հազարազույն.  
Վոր մեղկուրյան ու տոփաների պալաները հանդեմ հիմքից,  
Ձեզ վեր հանեմ ոպիումի յեվ հաճիքի բմրուրյունից:

Ձեր բմրուրյան համար է, վոր յես բերում եմ յերգ ու վաղջույն,  
Վոր գալիք Մեծ որվա համար պատրաս լինեմ գում յեվ արրուն.  
Յեվ ըիկացած ավագների ծոցեն յելուղ արեվի պես  
Ձեր սեվարույր դալուկ դեմքին, անհանգչելի փայլ տեսնեմ յես:

Անձայրածիր անապատեն արշալույսող արեվի հետ  
Պիտի լսեմ կարավանիս զլրբնգոցը վարպես ավետ.  
Պիտի հոգին ձեր բոնկըլի, աշխարհացունց կրակով մի,  
Ձեր արնաբամ յերակներում ապստամբ յերգ պիտի հոսի:  
Չինավորվեմ պիտի մի որ, դասակարգիս յերգի բափով,  
Ձեր մսերի կարավանն էլ պիտի շարժվի նոր զբնգոցով.  
Հեռու յեվ մոտ աշխարհներին, Արևիլելից մինչեվ Հյուսիս,  
Հոկտեմբերյան կուռ ըղբայով պիտի լինեմ հաղորդակից:  
Պիտի ցնցի ուղիղ ձեր, ոդը ցնի պատերն իր հին,  
Նոր հույզերով ու նոր բափով սելամ կրտամ գալիք որին.  
Արաբիայից մինչեւ Բենգալ, մինչեւ հեռու Հարեւիստան,  
Կվաղջունեմ Կարմիր Աստղի բանակներին կուռ հաղբական:  
Ել չպիտի յերեսն ի վար որ ու զիւեր մնամ ընկած,  
Դառն սպիտումի ծխում խրված, միւս անրզան ու միւս հարբած.  
Հուժկու բափով դուք արթնացած ձեր դարավոր խորունկ բնից,  
Կպայքարեմ, յեվ կրծուլվեմ գալիք կյանքին աղմկալից:  
Սինգապուրից մինչեւ Հեջազ, մինչեւ Սուլտան Խնդուս Բեդուխն,  
Հանդիպելու պիտի յելնեմ իմ յերգերի կարավանին...  
Յես ձեր ծոցեն յելած շայիր, յես ապստամբ անտուն պոյես,  
Ձեր գալիքն իմ յերգում հիմա, պիտի ապրեմ նորեն ձեզ հետ:

Մոսկա—Տերմեզ

## ԶԱՐԹՈՒՆՔԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՅԵՐԳԸ

Ես անհատնում ավագածածկ համբաներովն Արեվիլիի,  
Անց են կացել հազար միկոն ուղար կարավաններ.  
Յես ել փորպես նրանց ըղբան, մնացորդը վերջին շարքի,  
Յեկա անցա ես համբեխով, ուր ցանեցի բմբոս յերգեր:  
Ինձից առաջ կարավանով ինչխա՞ն, ինչխա՞ն մարդ է անցել,  
ինչխա՞ն մուեզինի\*) յերգեր, անզիր դուռան է կարգացվել.  
Անման Ֆրիդուսն իր Շահնամեն ես համբեխումն է հղացել,  
Ես համբեխում շատ իմաստուն, բայց հնաբեր խոս է ապվել:  
Կարավաններն իրենց դանդաղ, ականջ ծակող սուր զնցոցով,  
Համբորդների հոգու դաշտում բմրուրյուն ու նիրն են ցանել.  
Բայց իմ ներսում ալյուծի պես մոնշացող յերգի բափով,  
Անապատներն արեվական, ժխոր, միտինգ կուզեմ դարձնել:

\*) Մուեզին մահմեդական կրտնական մեղեղի, վորը յերգում ե մհծ  
պահքի, կամ ուխտագնացության ժամանակ.

Փուլք չե, վոր իմ կարավանը, որորվում է համբ ու դանդաղ,  
Վորպես Շիրազի բայարի, վորպես հանգը իմ յերգերի.—  
Արեվելի կապուտաշյա յերկնի տակ հաօս ու խաղաղ.  
Մարդիկ ծնված որից ի վեր, դանդաղուրյան յեղան գերի:  
Ի՞նչ փուլք սակայն, —դարեր առաջ, Արեվելին իմ նեֆիարային,  
Հիմ յերգերի նվազի տակ որորվել է անհոգուրյան որորոցում.—  
Հիմա ուրիշ յերգ է նեշում երա մտին ու ականջին,  
Արեվելին նիմա մի նոր առավոտ է արշալույսում:—  
Հիմա մի նոր առավոտ է արշալույսում Արեվելին,  
Երա կարմիր շողերի պես կարավանն իմ զուգված զինված,  
Նոր յերգերի տեմպը սրտում, հաղրանակի կրակն աչքում,  
Զնզոցումը նոր ուժ ու բափի, —իր նոր համբի ուսին նսած:  
Ծեկ լայնասիր անապատի արևիանամ ավագներում,  
Կարավանն իմ մինչեվ կուրծեն ել յերե բաղվի, —առաջ կանցնի.  
Եր վոտ կոխած հազարանիուդ, հազարանիա նամբաներում,  
Մրափումի վորոս ու կանչ, ապսամբ յերգ պիտի ցանի:  
Խորասանից Մեծեդ, Շիրազ, մինչեվ Մեծիկա ու Մեդինա  
Չի լավելու այսուհետեւ մուեզզինի յերգ ու նամազ.  
Մարզարեի զերեզմանը փուշ է յեղել, փուչ կիմնա,  
Կարավանն իմ չունի մեջին վոչ ուղավոր, վոչ շալ ալմազ:  
Կարավանն իմ բարձած ունի իր բիկունին ազիս-յերգեր,  
Նա կտրում է Ել-Ակաֆի անապատը վորպես մրրիկ.  
Եր զնզոցով, հզոր կանչով պիտի հուզե միլիոն սրտեր,  
Մինչեվ միլիոն այդ սրտերում վառվե անմար մի փորորիկ:  
Մինչեվ ամբողջ Արեվելի ստեղներում լայնաբերան,  
Զարբոնի զիլ կոչը լալի յերկարաւունչ կարավանի.  
Այն ժամանակ ագիտարով ուղաւաւրբն իմ հնադարյան  
Ուրախուրյան արցունին աչքին Ել-Ակաֆում\*) հանգիս կառնի:

Խորասան—Հերաթ 1927 թ



\*) Ել-Ակաֆը չեջազի և արաբական ծովի միջև ընկած անապատն է.



ԱՇՈՏ ՂՈՒՍԵՆՅ

ՀԻՅԱԼԻ ՈՒԵԿ  
ԻՆՍՏԻՏՈՒԹ  
ԵՎՇՈԽՈՎՑԻՑԻ  
Ակադեմիա Խառ  
С С С Р

56434 - 66

### ԳՅՈՒՂՆ ՈՒ ՔԱՂԱՔԸ

Վորպես աչք,  
Փաղաքուշ մոր աչք—  
Հառած հեռու, փոշոս ճամբեքին,  
Սպասում է վյուղն անձկալուն՝  
Իր փայլուն փորդուն—  
Հզնը քաղաքին...  
Արգեն լսվում է,  
Լսնում եք՝  
Վորդու ձայնը հեռվում վոլորվող:  
Արգեն տեսնում եք,  
Տեսնում եք ժպիտը—  
Պարզած ձեռքերը այն մոր:—  
Շոգեկառքը  
Փնչում է ուժգին—  
Սլանում է,  
Սլանում է առաջ:—  
Կայծակ է,  
Կայծակ է հատու՝  
Գյուղի պատճենն է մարել.



Նա լո՛ւյս ե,  
Փարո՛ս ե՝  
Նկուղին անդժւղք ե բերել:  
Բորբ հոսանքները  
Տիտան հորձանքով,  
Գործարանների շշակների պես՝  
Յեռանդ են ջնչում,  
Տենդ են հաղորդում  
Վաղորդյան քնից  
Յեխող ցուրտ գյուղին:  
Հեռու քաղաքից,  
Ուր վառվում են ելեքտրոարևներ—  
Գալիս ե արեվը,  
Գյուղի կուպրած գիշերվան՝  
Շպրտելու անթիվ լուսիկներ:  
Հե՛յ,  
Տեսնո՞ւմ եք  
Մուրճ ու մանդաղի  
Զոդումը.  
Լսո՞ւմ եք—  
Յերկաթի գրգիռը,  
Յերկաթի այն ճիշը անո՞ւշ.—  
Լսո՞ւմ ես  
Զգո՞ւմ ես բանվոր, գյուղացի,  
Զգո՞ւմ ես,  
Թե վոչ:

Ոռոսով-Դռն 1926 թ.

**ՅԵՐԳ ԴՈՆԻ ՄԱՍԻՆ**

Լայն ու արձակ այն դաշտերով, այն դաշտերով լայն ու  
արձակ—  
Հոսում ես, Դո՞ն, միշտ մեղմահոս՝ դանդաղ, հանդարտ ու  
անկարկաչ,  
Վտակներով, առուներով, ստեղների դեմքը ցանցած՝  
Ժպտում ես դու հեռուներին, հեռուներին կապտականաչ:  
Քո ափերին կանաչապատ քաղաքներ են փովել անթիվ,  
Գյուղեր անթիվ ու անհամար ճիշից զարթնող հուր յեր-  
կաթի,  
Ու Ոռոսովը կանգնած համառ մեծ հանգույցում ճամ-  
բաների՝  
Վոնց դեկավար հրահանգում ե քաղաքներին. ու գյուղերին:  
Քո ափերին բուռլակները առավտից մինչ իրիկուն՝  
Նավակները բեռնավորված քաշում են միշտ բազկով ճկուն,  
Յեկ մերթ ընդմերթ յերգ են յերգում՝ բուռլակների կա-  
նայք խմբված,  
Յեկ մերթ ընդմերթ յերգ են յերգում խինդ ու ծիծաղ  
իրար խառնած:  
Քո ափերին մեծ զավոդներ, գործարաններ յերկինք մեխ-  
վող՝  
Ճշում են գոռ, խրոխտ ձայնով՝ աղաղակով, ուժգին թափով,  
Ու յելնում են նոր զավոդներ ձայնակցելով նրանց ճիշին,  
Ու գեռ քանի՛ նոր շշակներ պիտի հնչեն քո ականջին:  
Քո ափերին՝ հովիտներում ու դաշտերում կանաչ ովկյան—  
Ժիր գյուղացին հողն ե վարում՝ կամքով արի ու առնական,  
Ժիր գյուղացին հողն ե վարում՝ յերգ ե յերգում միշտ  
հաղթական,  
Յեկ տրակտորի դեկը բռնած հիմա գիտե բախտն իր  
վաղվան:  
Հսկա նավեր ջուր ճեղքելով անց են կենում շտապ, ագահ,  
Լող են տալիս արագընթաց ու չեն ուզում կորցնել մի պահ.

Հասկացել են կարծես նըանք որերը մեր հրդեհավառ,  
Հասկացել են, վոր կյանքը այս՝ արշավ ե մի վաղվա համար:  
Յեվ կանալդ ենք փորում ահա որտով վառված ու ժրաջան,  
Շուտով, շուտով ընկեր դառնած ձեռք կմեկնի գեպ քեզ  
վողան,  
Ու վողջույնին վողջույն տալով՝ առողջ, ջահել կանգնած  
վոտի—  
Ջրանցքների մեր լույս յերկրում դու կկապես մի նոր  
գոտի:  
Յես քո պայծառ նայվածքի մեջ իմ մեծ յերկրի դեմքն  
—եմ տեսնում  
Նա յել այդպէս միշտ խնդասիրտ, վառ տեհնչանքներ ունի  
ներսում.  
Ո՞վ ե ասում, թե ծովը միշտ լայն ե քեզնից ու գեղեցիկ  
Քեզնից ել վա՛ռ, քեզնից ել լա՛յն, ո՛, իմ յերկրի լուսե  
մասնիկ:  
Ինչո՞ւ, ինչո՞ւ իմ աչքերին թվում ես դու վառ ու ան-  
դին—  
Այստեղ, այստեղ, այդ ափերիդ հաղթ բանվորը մուրճը  
ձեռքին՝  
Իր այսորվա կյանքն ե դարբնում, քարիչներն ե շա-  
րում վաղվա,  
Իսկ գյուղացին գարթնող գյուղում ելեկտրոլամպ ե վա-  
ռում հիմա:

Ահա ինչու իմ աչքերին ու իմ սրտին մոտիկ ես դու—  
Քո այսորվա կյանքն արեվիվառ հիացմունք ե տալիս մարդու.  
Ով չի տեսել քեզ գյութի՛չ Դոն, կիանա յերբ վոր տեսնի,  
Ով տեսել ե մի որ առաջ—կզարմանա այսոր տեսնի:

ՏԻԳՐԱՆ ՏԵՐՈՒՆԻԼ Ե Ն Ի Ն

Հեռավոր ու հեռու, դարերի մշուշոտ խորքերից  
Գալիս եր փոթորկված, հորդացած մի հեղեղ դարձած նա.  
Նշածե աչքերը—սուր սվին—հառել եր դալիքին  
Ու գալիս հաստատուն պատգամով նոր կյանքի արևկա:

Դարերի ձամբան մութ, մշուշ եր ու դաժան, առապար,  
Պայքարը դժվարին, բայց յերեք հուսահատ ու լքող...  
Յեվ արդար բարկության ցասումն ու զայրույթը յերկնավառ՝  
Նեցուկն եր Հանճարի—անհողող և ըմբռստ, ընդվզնդ...

Յերկիրը զառամած մի ծերուկ—հորանջում եր անբան,  
Զեր շարժվում, չեր ցնցվում—ծանրացած մշուշ եր ամենուր.  
Շնչառառ ու խեղդվող բյուր մարդիկ-աշխատող ու բանուկ՝  
Կյանք չունեյին աշխարհում միգապատ, անթափանց ու  
տիսուր...

Ու անթիվ դարերի մառախլով պարուրված խորքերից,  
Տառապող մարդկության տանջանքից ու ցավից նա ծնված՝  
Հուզմունքից բռնկված՝ վորոտաց իր ձայնով ու գոչեց  
Հաղթական ու հատու... և ծերուկ աշխարհը դողդողաց...

«—Վերջ արդար վաստակով աշխատող  
Ու ասլրող մարդկության տանջանքին.  
Վերջ այս ծույլ ու անբան, հորանջող,  
Ծանրաքուն, մշուշոտ աշխարհքին...»

Հասել ե պայքարի դարը նոր.—  
Թող կորչի յերկիրն այս ծերուկ՝  
Կարգերով իր վայրագ ու մոլոր,  
Վոր բանտ եր տանջանքի—մի անձուկ:

Թող յեռան լավաներ, հրդեհներ,  
Թող կարմիր բոցերում մոխրանան  
Բիրտ կարգեր ու իշխան, ճնշումներ,  
Վոր ժպտա մեզ կյանքի ապագան։

Թող վառվեն սրտերը բորբոքված,  
Վոր դարեր շարունակ միշտ փակված՝  
Կրել են հազար ցավ ու տանջանք—  
Միրելով քրտնաջան աշխատանք։

Հրավառ լավաներ թող պոռթկան,  
Թող մուրճն ու մանգաղը շիկանան,  
Վոր զարկեն ու հնձեն լայնարձակ՝  
Բանվո՞րն ու գյուղացին համարձակ...

Ինչ վոր կար հին որից մնացած,  
Թող կորչի դարերի մշուշում.  
Տառապող ցեղերը դրկաբաց՝  
Թող ապրեն նոր կյանքի աշխարհում...

Դարերի սրտամաշ կենցաղում տառապող  
Մարդկության վշտերի բոցերում Յես ծնված՝  
Հասել եմ պայքարի վերջնական այս դարին  
Ու խրել սայրսուր նիզակն իմ շիկացած՝  
Աշխարհի սրտի մեջ՝ շառաչող, և հատու, ու ցնցող...

Նետել եմ Հոկտեմբեր աշխարհի չորս բոլոր  
Ու վառել սրտերը կարոտով սպասող.  
Մանր ու մեծ ցեղերին նոր կենցաղ ու նոր որ  
Բերել եմ դարերի պայքարով արևշող...

Յերգում եմ ահա Յես բոլորին,  
Աշխարհի մի ծայրից մինչեւ մյոււս՝  
Կանչում եմ գեղջուկին, բանվորին,  
Յեվ ճնշված ազգերին, վոր անլույս

Ապրել են հինավուրց որերում  
Ու աւանջվել կենսամաշ հոգսերում»։

Ու թնդաց վորոտը Հանճարից աշխարհներ,  
Ովկյանից-ովկյանոս—հեռավոր, անծանոթ յերկրներ...  
Դղբդաց յերկիրը դարերի մշուշից արթնացած  
Ու շարժվեց տարերային մի թափով մոլեգին, սրբնթաց...

Նոր-Նախիջնան 1927 թ.

## Ի Մ Յ Ե Ր Գ Ը

Յես ել չեմ կարող իմ սրտի անհուն  
Խիսդը չարձակել ու չյերգել հզոր  
Որե՛րը՝ կարմի՛ր, որերն այս հնչուն.  
Վոր զիլ թնդում են սրտերում բռսօր:  
Յերկար լուեցի... և ահա այսոր  
Մի յե՛րգ կուեցի իմ սրտում անշեծ,  
Վոր հնչեմ չորս կողմ աշխարհի բոլոր,  
Վոր թնդա՛, զնդա՛ վառ սրտերի մեջ...  
Յեվ այսոր ահա նետում եմ յերկրի  
Բոլոր կողմերին իմ յե՛րգը՝ հնչո՛ր,  
Իմ ճի՛չը՝ հզո՞ր, իմ խինդը՝ բարի՛,  
Իմ խո՞սքը՝ կարո՞ղ, իմ միտքը՝ թոչո՞ղ...  
Զեմ կարող լոե՛լ... Յես հեղեղ գարձած՝  
Դալի՛ս եմ անհուն կուտակումներից  
Բյուր տարիների՝ անցա՞ծ, զնացա՞ծ.  
Դարերի մաշող տառապանքներից  
Էնդմիշտ ազատված՝ դալի՛ս եմ այսոր  
Ներկան ապրելու յերգերով իմ նոր:  
Բոլոր սրտերի վառված հրդեհում  
Չուլում եմ ահա իմ սիրու հզոր,  
Յե՛վ կանչում եմ զի՞լ, և ուժգին ցնցում  
Տառապողներին աշխարհի բոլոր:  
Կանչում եմ ուժգին և բոլոր նրանց,  
Վորոնք ուզում են թուշել անհունում,  
Վորպես սավառնակ, վորպես ուսկետ,—  
Մոլորակներից՝ մի նոր մոլորակ...  
Յես ել չեմ կարող չյերգել ու չասել  
Այս նոր որերի ապրումները հուր,  
Որերը՝ կարմի՛ր, սրտերը՝ ջահե՛լ,  
Վոր միշտ լեցուն են դալիքներով բյուր...

## Ն Ո Կ Տ Ե Մ Բ Ե Ր

Բոլոր չոկտեմբեր, գալիքների զու մայր անման,  
Աշխարհավառ հրդեհների կարմի՛ր յեզերք,  
Փոթորկաշունչ կայծակների վորհա անման՝  
Հազար ափից հազար վողջույն—քեզ խի՞նդ ու յերգ:

Յերկինքներն աստղաբորբոք ու հրակուռ—  
Հորդ ու կարմիր բոցերիդ դեմ թույլ են, անդոր.  
Արևավառ մի նոր կյանք ես փուել հանուր,  
Բազմահազար սրտերի մեջ հուր ու հզոր...

Հազար կյանքեր, հազար ջահել սիրու ու հոգի,  
Հազար ու բյուր հայացքներ ծո՛վ, կարոտավառ,  
Հաղթությամբ լի՛քո հոյակապ այս նոր կյանքի  
Որն են յերգում սիրությոք հույզով պայծառ:

Նկուղներից աշխարհների բոլոր ծայրի  
Յեվ խորշերից խոնավ ու մութ զնդանների՝  
Քեզ են տենչում, քեզ են ձգտում, ո՞վ չոկտեմբեր,  
Դու հիացքի՛, հիացմունքի՛ վառ չոկտեմբեր...

Ով չոկտեմբեր, գալիքների ծնող անման,  
Աշխարհացունց հրդեհների կարմիր յեզերք,  
Պայքարաշունչ պոյեաների դու հույզ անման՝  
Բյուր ափերից հազա՞ր վողջույն—քեզ խի՞նդ ու յերգ...



ԱՐՄԵՆ

## ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

Քուրաների լեզվակները այլող ու թեժ,  
Հնոցների խուլ վորոտը միապաղաղ,  
Տեմպ և տալիս անիմների պառույներին՝  
Ույժ ներշնչում այս յերկաթյա գործարանին:

Յեկ հոսում ե առվակի պես ձուլվացքը թաց  
Ես հրաշեկ բորբ աչքերից հնոցների,  
Զիլ վշալով ու փշշալով թափիզում ե ցած  
Զուլված պողպատ, կարմիր հեղուկ՝ վորպես դինի:

Յեկ վայ նրան, այստեղ մտնող անփորձ մարդուն,  
Վոր անզգույշ կմոտենա մի կաթիլին.  
Շանթահարված անխոս անբառ կզլորվի  
Եյս հուր հրան ձուլվածքներում պողպատային:

Յեկ այս նեքոտ գործարանը ամենուրեք  
Աշխատում ե և կարող ե դադար առնել,  
Յեթե ուզի թեկուզ վերջին բանվորը սե՝  
Շարժել նրա գոռող սրտից վիճա կամ մի թել:

Վարանման մեծ մուրճերի զարկը՝ սարսափ,  
Ինքնապտույտ սղոցների վազքը թեթև,  
Կուզեն վերջին ձեռքը լափել ագահաբար,  
Վոր հազենա իրենց անկուշա վորկորը սև:

Բայց հարյուրներ այս ցեխերում տոկուն ու ժիր,  
Իրենց կամքն են թելադրում ամենուրեք,  
Իրենց կամքն են թելազրում այս սրտերին,  
Եյս սրտերին պողպատաձույլ ու հրաշեկ:  
Նոր-Նախիջևան 1927 թ.

## ՏՐԱԿՏՈՐԻՍ ԸՆԿԵՐՈՂԱ

Հուր արեկի դու իմ ընկե՛ր,  
Շոգեգութանն ե քեզ քեֆ խնդում.  
Ու դու նրա ղեկը բռնած  
Կյանքին կտաս մի նոր յերգում,  
Վոր դու հալարտ ու անվիատ  
Գյուղի գործը պիտի տանես,  
Հողը կոշտ, հողը խոպան  
Պիտի հերկես, պիտի ցանես:  
Առավելում շուռ տուր, շարժիր  
Թևակները, սուր խոփերը տրակտորի.  
Թովիր առաջ խոպան դաշտում,  
Վառ ու սիրուն ակոսներից շարքեր շարի:  
Հողում թաղված ժիր խոփերին  
Ույժ տներ, հողով քո մաշինի.  
Յուղով մնիր հեվքը նրա  
Անիվներին ժիր ու արի:  
Յեվ քո գործը վեհ առնացի,  
Այս արեստ փոշուն խառնած  
Պիտի ծնի մի նոր գարուն.  
Մի նոր գարուն և վեհ և մեծ,  
Համայն հոգով աշխատանքի.  
Կյանքը մի նոր յեսուն շրջան  
Աշխատանքի և մեծ փառքի:  
Վարիր, վարիր դու իմ ընկե՛ր,  
Այս արեստ փոշում հրկեդ.  
Այս հանգած, լուռ մերկ գաշտերում,  
Նոր հույս վարիր, նոր պարծանք մեծ:

Նոր-Նախիջևան 1927 թ.



ՀՐԱՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

\* \* \*

Ամեն մի խփոցը նյարդի,  
Ամեն մի թրթիռը սրտի,  
Ամեն մի պտույտը վինտի  
Նոր քայլ ե դեպի գալիքը...  
Ամեն նոր ժողով-ղեկուցում...  
Նոր զարկ ե պապական նսին,  
Զահել սրտերը կաշկանդող  
Գյուղի խավարին, քնին...  
Ամեն մի մատոր, տրակտոր  
Մաշում ե մի թել նսից,  
Պոկում ե մի մի կտոր  
Զառամած պապիս խոհերից...  
Ամեն մի տոն ու տարեգարձ  
Նոր միաք յեվ հույզ ե ծնում,  
Ամեն մի աշխատանք ավարտված  
Նոր խնդիրներ ե դնում...  
Կոմսոմոլ, փոթորկող սրտով  
Լծվել ես կյանքին յեռուն.  
Քայլում ես հաստատ, անվրդով  
Պեպի վոսկեվառ հեռուն...  
Յեվ այդպես անհամար վինտեր-  
Նյարդեր ու սրտեր միաձույլ  
Լարվում են, խփում համառ  
Գալիք որերի համար...

## ՀՈՒՇԵՐ ԳՅՈՒՂԻՑ

Հիմա անցյալը հեռու մի հուշ  
Թուփառում է մտքումս անսանձ  
Ակամա հաշիվ եմ տալիս ինձ  
Թե ինչ եյինք մենք ի՞նչ եյի յես...  
Դեռ ինչքան թարմ են հուշերն այն  
Ակների ճռոցը սելի  
Յեզների զանգակներն ուրախ  
Դեռ զնզում են սրտումս ելի,  
Քաղցր եր բառաչն այն ուրախ  
Ճիպոտի հարվածը ճարպիկ  
Վոր հասցնում եյի են չար հորթերին  
Վազելով հետքներից բոբիկ...  
Հիշում եմ դաշտ գնալիս  
Տղերքով գոմեշներն հեծած  
Վոնց եյինք ճիպոտում քշում  
Միմիանց թասիբի զցած:  
«Տեսնենք ում ձին կանցնի»  
Հայ եյինք տալիս խմբով  
«Հեյ ջան Մարալ ջան Մաղան  
Չինի թե թողնես ամոթով»...  
Եխ որեր մեռած թաղված  
Եխ աշխարհ լեն ու բարի  
Չգիտեյինք մեզնից ծածուկ  
Ինչեր ե կյանքում կատարվում  
Ամեն մի անցնող տարի  
Քանի կոկորդ ե սղոցում:  
Դեռ փոքր եինք անփորձ տղերք  
Ինչ գիտեյինք ինչ կար աշխարհում  
Բանվոր ու բուժուն ինչե  
Կուլակն ու բատրակը ինչ...  
Յեվ թվում եր աշխարհը հանգիստ  
Պտավումե, վոնց կամը կալի...  
Տեսել եյինք քյոխվեն զզրին

Սրան կամ նրան ծեծելիս  
Եսել հորս պատմելով  
„Գող“ „Հաղվերմազեր“ դուրս գալիս  
Ով կհավատար վոր ուրիշ,  
Մեզ անհայտ մեր գյուղիցը դուրս  
Աշխարհում ուրիշ մի բան կար  
Մեր մտքից մեր սրակցը դուրս:  
Բայց հիմա ո՞ հիմա գիտեմ  
Ամբողջ գախտնիքն աշխարհի  
Գիտեմ վոր Հոկտեմբերերն արդեն  
Ապրելե տասը տարի...  
Գիտեմ և այն ել վոր աշխարհը  
Տասը պառույտ ե գործել  
Իր համար հազարն անցել:  
Տեսնում եմ արեվի պես վառ  
Հոգուս դեմ չկա գաղտնիք  
Յեթե աշխարհը փակ դուռ ե  
Յես ել մի բացող բանալի...  
—————



ՊՈՂՈՍ ՄԱՆՈՅԱՆ

## Ա Յ Ս Ո Ր

Այսոր աշխարհը հղի յե դառել մեծ Հոկտեմբերում,  
Աւսոր աշխարհը խնդում ե նորից վառվող հրդեհում:  
Այսոր աշխարհը փոխվել ե հիմքից, նման չե հսկն  
Նորեկ որերը կըակ են դարձել վառվում են կրկին:  
Մեր յերկիրն հիմի գալիքի համար նոր շենք ե հիմնում  
Յեզ ուժգին կերպով առաջ ընթանում, նոր կյանք ե բերում:  
Այսոր ամեն տեղ կովի յե յելել ճարտը տիրոջ գեմ  
Դաստկարդի մեծ արդար պահանջն ե այսոր յելել բեմ:  
Այսոր չինաստանն ե լողում կովի կարմիր ալիքում  
Յեզ հնդիկն ու արաբը աշխարհի մյուս ծայրամասերում:  
Այսոր ամեն տեղ պատնեշ են սարքում կովի դուրս դալու  
Վողջույնի կանգնած մեծ Հոկտեմբերին դիմավորելու:

Մոսկվա 1927 թ.



Մ. ԳՈՐՈՅԱՆ

## ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ

Եա ծնվեց հրավառ, կարմիր որերում  
Հզոր մուրճերի հարվածների տակ  
Հավատովլ լցվեց գեղի ապագան՝  
Դեպի գալիքը—դեպ մեծ հակթանակի:

Ու բյուր տենչանքներ բոսոր կրծքերում  
Նրանք նետվեցին դաշտը պայքարի,  
Վառ ազատության հուրը սրտերում  
Բնկան զոհվեցին կամքով վառ արի.—

Յեզ այսոր կանգնած մեր հաղթանակի,  
Տասերբորդ տարվա վեհ շեմքի վրա,  
Տօնն ենք կատարում, տոնը ձեր գովքի  
Զեզ մեծ հերոսներ, վառ հոկտեմբերի...

Կրտսենողար

## ԶԱՐԹՆՈՂ ԱՐԵՎԵԼՔ


Արևելքն այսոր զարթնել ե թափո՞վ.  
Արևելքն այսոր վառվել ե բոսոր.  
Իմ սիրտն ել այսոր վառ ե նոր բոցով,  
Իմ յերգն ել այսոր հնչում ե հղոր...

Վոտքի յե կանգնել այնտեղ չին կուլի՞ն,  
Վորպես մի՛ պաշտպան իր արդար դատին,  
Ինչպես մի հարդանք ալեկոծ ծովի,  
Յերկիրը տանջված գնում ե կովի...

Վոչ մի դավաճան փոխել չի կարող,  
Կամըը չին կուլու, սիրտը լիքը վոխ,  
Յեվ ով կարող ե ծովի դեմ կանգնել,  
Նրա ահավոր ուժին դիմադրել...

Արևելքն այսոր վառվում ե բոսոր,  
Սրտերն ամենքի թնդում ե այսոր.  
Վառվում ե մեր դեմ, վառվում անվեհեր  
Մի հղոր գալիք—համայն հոկտեմբեր...

Կրտսնուդար



Ս Ր Ա Գ Ի Ա Ն

Յեվ կյանքը մեր վառ ու յեռուն՝  
Գարուն ե միշտ, աշուն չունի:  
Թուչում ենք մենք հեռու հեռուն,  
Թուիչքը մեր դադար չունի:

Դարը՝ գարուն, կյանքը՝ գարուն,  
Որը՝ գարուն, ժպտուն գարուն.  
Սրեվը բորբ հուր ե վառում  
Կյանքի կարոտ, մեր սրտերում:

Յերկաթականչ յերգն ե թնդում,—  
Շոգեգութան, լծակ, անիվ,  
Ճիչ ու սուլոց, վազք ու խնդում,  
Տեհնչանք ու հույզ քանի՛, քանի՛:

Ջա՞ն, գարուն ե ալ ու ալվան,—  
Մեր աշխարհը ծաղկող գարուն...  
Մենք կերտում ենք կյանքը վաղվան,  
Կում ենք միշտ, հնձում, վարում...

## Մ Ա. Ա. Յ.

## ՀԻՆ ՆԱՎԸ

(Պատկեր)

Նվեր Բագվի հեղափոխական  
պատկերաբառին

Արեւ այրող ճառագայթները վաղուց արդեն ջերմացնում  
ելին նավաշինարանի մեքենավարի ոգնական Պուլ-Հասանի  
կնճռուտ ճակատը:

Նա իր արծվի հայացքով դիտում եր ծովի խաղաղ տարա-  
ծության մեջ լողացող անթիվ նավերին, վորով լցվում եր նրա  
հոգին հաղթող ուղմիկի անսպառ վեհությամբ, իր ուրախու-  
թունն արտահայտելու համար, արեւից սևացած նրա հաստ շրթունք-  
ները յերկու բառ միայն արտահայտեցին:

— Բոլո՞րը մերն ե.

Պուլ-Հասանը կողքի զրաբանից հանեց արծաթե ահագին  
ժամացուցը, լավ աընտղելով նրա սլաքների շարժումը, ձեռքը  
տարավ շոգեմեքենայի սուլիչին և զիլ կերպով սկսեց լսվել նրա  
ազդարար ձայնը:

Այդ թեթև գործողությունը կատարելուց անմիջապես հետո,  
նա հանեց զրաբանից ծխախոտի քիսան և բաց արեց ինսամքով  
փաթաթված նրա ծալքերը, Ստամբոլի գեղին թութունի վոսկի  
թելերը բթամատով հուպ տալով ահագին չիրուխի մեջ, վասեց,  
ագահ ցանկությամբ, և իր թոքերի ամբողջ կարողությումը սկը-  
սեց ծծել կապույտ ծուխը, իսկ թութունի քիսան կրկին նույն  
խնամքով ու հոգատարությամբ ծալեց և տեղափորեց զրաբանում:

Ինչպես միշտ, այս անգամ ևս Պուլ-Հասանն իր թութունի  
քիսայի հետ կապված հիշողությունների դիրքն ընկառվ:

Նորից նրա փոքրիկ ու ծվածե գանգի մեջ, կինոժապավենի  
պես սկսեց պատկերանալ նրա անցյալը, վորպես կենդանի  
տիսիլ:

\* \* \*

Պուլ-Հասանի զլմով կյանքի միայն յերեսուն գարուններ  
ելին անցել, բայց այնքան վաղ և այնքան շտապ կերպով կյանքի  
ձմեռը շաղ եր տվել նրա սև դիրքերի պես մութ մտղերում սպի-

տակ ձյունը, վոր նրան առաջին անգամ տեսնողը հաղիվ թե հա-  
մաձայնվեր, վոր նա հիսունուց պակաս տարիք ունի:

Չնայած զրան, Պուլ-Հասանի հիշողությունը չափազանց  
սուր եր, ամեն անգամ, յերբ զրաբանից հանում եր նա իր թութունի  
քիսան, զրա հետ միասին սկսում եին վերաբինանալ նրա ըոլոր  
հիշողությունները, վորոնք սերտ կերպով՝ կապված եին այդ  
քիսայի հետ:

Ահա նրա հիշողության մեջ պատկերանում ե իր հայրենի  
գյուղը, հեռավոր Պարսկաստանում, ուր այնքան դառն ու կսկը-  
ծալի որեր անցկացրեց՝ Պուլ-Հասանը. զյուղատեր խանի ծանր  
հարկատվությունից իրենց փոքրիկ տնտեսության քայլացումը և  
ապա խաների մոտ իր զուլությունը, վորից շահեց Պուլ-Հասան  
անունը. Ապա իր սիրած հարսնացույին իր ձեռքից խլող խանի  
տղային սպանելը, վորի պատճառով թողեց ու փախավ սահմանի ես  
կողմը. այդ բոլորից նրան միակ հիշատակ եր մնացել թութու-  
նի ես քիսան, վորը նվեր եր ստացել իր սիրած Սաքինեից:

Այդ բոլորից հետո, նրա առաջ պատկերացավ Բագուն իր  
նավթի զավոններով, ուր առաջին անգամ նա ընդունվեց սև  
բանվոր. քիչ ոսճիկ, անմաքուր կյանք, վորի պատճառով նա մի  
բանի անգամ ծանր հիմանդրացել և հիմանդրացել որերի վարձը չեր  
ստացել ու ձեռնարկել են զործադուներ, շնորհիվ վորի միշտ ել  
հետացվել և զործից. աշխատել և ուր պատահել. իսկ հետո ել  
բնանակլություն արել ծովափում:

Բայց ահա փոխվում ե Պուլ-Հասանի փոքրիկ գանգում կի-  
նոժապավինը. Ռուսաստանում սկսվել ե մեծ հեղափոխություն.  
Պուլ-Հասանն եղ մասին լսել եր բանվորների զաղանի ժողովների  
ժամանակ, զրա համար ել նա կարողանում եր իրարից տարրե-  
րել բանվորական և բուրժուական հեղափոխությունը:

Նա անմիջապես վորոշեց իր զերքը, նետվեց հեղափոխու-  
թյան զիրկը և մասվ Անդրկովկասի հեղափոխական կարմիր  
զվարիխայի մեջ միշտ ել պատասխանատու դիրքերում, միշտ և  
հեղափոխական բանվորների կողքին:

Ռազմական հեղափոխությունն անցավ, յեկալ շինարարա-  
րական հեղափոխության ըրջանը, իսկ Պուլ-Հասանն այստեղ ևս  
կատարում ե մի շարք պատասխանատու աշխատանքներ, թե կու-  
սակցական և թե պետական մարմիններում, միաժամանակ սո-  
վորելով տեխնիքական կուրսերում այժմ նշանակված եր մեքենա-  
վարի ոգնական:

Մինչ Պուլ-Հասանն աշխատում եր ի մի գումարել իր յերեսուն տարվա կյանքի մանրամասնություններն ու կատարված փոփոխությունը, ինչպես այդ անում եր միշտ իր զեկուցումների ու հաշվեալվությունների ժամանակ, հանկարծ սուլիչի ձայնից աշխատանքի գնացող բանվորների շարքերը դեպի իրենց գրավեցին նրա ուշադրությունը վորն իր հին մտքերի թելը կորցնելով քայլերն ուղղեց դեպի բանվորները:

\* \*

Դազգյաների առաջ շարված բանվորները մի առանձին թափով եյին աշխատում, հին նավը, վորը խորտակվել եր Բագուն հականեղափոխականների ձեռքն անցնելու ժամանակ, այժմ դուրս բերվելով նորոգվում եր և ավարտման մոտ եր:

Պուլ-Հասանն այդ աշխատանքով այնքան եր վոգեսորդում, վոր հաճախ աշխատում եր վորեե գործ անել և իր աշխատանքը միացնել ընդհանուրին:

Նա չիրուխից քուլա-քուլա ծուխը բաց թողնելով, մոտեցավ նավի մեջ աշխատող բանվորներին:

— Հաջող աշխատանք ընկերներ, ասաց նա բարի լույսի կամ սելամ ալեքի փոխարեն.

— Հաջողությունը մերն ե, — պատասխանեցին մի քանի բանվորներ:

Ապա Պուլ-Հասանը մոտենալով իր նախկին ընկեր ուստաշարութին, վորը յերկար տարիների ի վեր աշխատում եր նավաշնարանում, սկսեց նրա հետ մի քիչ սրախոսել.

— Ա՛ քիշի, ուստա Հարըթ, մեխերը պինդ ես խփում թե չե՞...

— Ենենց պինդ եմ խփում, վոր քյասարախների (մուսավաթիստներին) աչքն ել եմ հանում.

— Աշի, ինչու հենց քյասարախների աչքն ես հանում, բա ձեր դաշնակների աչքերը պահում ես թթու դնես ինչա՞.

— Դե հենց յա դաշնակ, յա թե քյասարախ, երկուսն ել մեկ են, ի՞նչ տարբերություն. հենց նրանք ել մենշեկների թայն են, վոր մեր յերկիրը քանդին ավերին.

— Հա, յոլգաշ Հարըթ զյուղա, նրանք յեղան պատճառը, վոր մեր շինարարությունն եսքան յետ մնաց, ելա զիտես յոլգաշ Հարըթ, ելա հար իրիսինի ուչ նահլաթ.

— Բալի-բալի յոլգաշ Հասան, հենց իրերին ել իրեք նահլաթ, հիմա ես յերկիրը աշխատավորներիս և աշխատավորներիս ել կը մնա, այդ ասաց ուստա Հարութը թե չե սկսեց յերգել:

Մենք զարձել ենք կրամնարմնեց  
Չեսանի բալենիկ  
Դե սարսափեք հիմա մեղնից  
Դաշնակ, մենշեկիկ.  
Գնաք տարով չգաք բարով  
Ռասուլ զագե պարուն Խատիսով  
Ես յերկիրը մերն ե յեղել  
Մերն ել կը մնա...

Ուստա Հարութն իր յերգն ավարտեց թե չե, բոլոր բանվորներն սկսեցին բղավել.

— Սաղ ոլ, սաղ ոլ յոլգաշ Հարըթ, յաշան, բրավո...  
Յերբ Հարութն իր առանձահատուկ կոմիկությամբ սկսեց դլովս տալ իրեն յաշաւըն ասող ընկերներին, հանկարծ նրա խիտ հնաքերի տակ թագնվաւ խորամանկ աչքերը նկատեցին հին նավի ճակատին մնացած վեց խոշոր տառեր:

### Հ Օ Բ Ե Պ Ե

Հարութն անմիջապես վերցրեց մուրճը և ուներին, պոկելով հին տառերի մնացորդը, վորը հիշեցնում եր Բագվի նախկին նավթարդյունաբերողի անունը և ձեռքին տարութերելով այդ վորումնելի ցուցանակն ասաց.

— Ընկերներ, ուղիղ 15 տարի սրանից առաջ եր, վոր իմ բազուկներով ամրացրի ես նավի ճակատին եղ անունը, իսկ եսոր ինքս ել քանդում եմ:

— Ե՞ն, յեղիաշ Հարըթ, բա յես ինչքան իմ ուսերի վրա բեռներ եմ կրել ես նավի համար, մինչև անգամ ուզմամթերքի մեծ-մեծ արկղներ, վոր պատրաստված եին յեղել հենց մեղ պիս բանվորների ձեռքով, մեղ պիս բանվորներին ել կոտորելու համար, հեշտ զիդի աշխարհ հա՛, ասաց Պուլ-Հասանը շիրուխը փըստացնելով:

— Ընկերներ մեղնից ամեն մեկն իր բաժինն և ունեցել մեղ համար միանգամայն աննպաստ ձեռնարկներ կառուցելու գոր-

ծում, մենք ինքներս մեր ձեռքով բանակը ենք կառուցել, կախաղանի ոյուներ բարձրացրել մեզ համար, իսկ մեր թշնամիների համար գեղարվեստական տաճարներ և շքեղ պալատներ, եհ, անցան, անվերադարձ կերպով անցան են որերը, այժմ մեզ, աշխատավորներիս և պատկանում մեր յերկիրը և նրա բարիքները, —ասաց տախտակագործ Տարասովը ճակատի ծալքերի մեջ կլոված քրախնքը սրբելով, հնացած կեսկան հրեց մինչև ծոծրակը:

—Այո՛, մերն ե ամբողջ յերկիրը և մեր ստեղծած բարիքից ոգտվելու իրավունք ունեն միայն աշխատավորներն ու բանվորները, ասաց Հարությը և մուրճի հարվածներն իջեցնելով հին նավի ցուռկին, ամրացրեց նրա ճակատին լատինական թյուրքերն տառերով նրա նոր անունը «ՇԱՐԿ ԻՆԿԱԲԻ».


Դուլ-Հասանի ուրախությանը չափ ու սահման չկար:

Նա միանգամ ևս բաց արեց ինսամքով ծալած թութունի քիսան, բթամատով նորից հուպ տվեց ահազին չիբուխի մեջ վոսկեթել թութունը, ու ել յետ ինսամքով ծալեց քիսան և նրա հետ կապված իր հին հիշողությունների կծիկը ևս զրեց գրպանը, իսկ չիբուխի ծուխի քուլաները դուրս հանելով լայն քթածակերից, նրա փոքրիկ զիսում զարթնում ելին նորանոր մտքեր.

—Նորի՛ց մի նոր հաղթանա՞կ, շինարարական մի նոր նվաճում ևս, քանդում ենք հինը և նորը շինում, —մտամտաց Դուլ-Հասանը, և շտապեց մեքենավար Բերտմանին տալ այդ մասին իր զեկույցը:

—Նավու արդեն պատրա՛ստ ե, ինձ թվում և պետք ե հընչեցնել նախաճաշի սուլիչը, վորից անմիջապես հետո նորոգված նավով մի վորձարշավ կատարել:

Բագու 1925 թ.



Հ. Ա. Ա. Ք. Ք. Ե.

## ԴՐԱՊԱՆ ԳԻՈՐԳԻՆ

I

Մի փոքրիկ մարդ եր: Կարճ, վտիտ մարմնով: Միայն ձեռքերը կոշտ ու կոպիտ եյին, մեծ: Սովորություն ուներ նոսր՝ բեխերը միշտ ինսամքով սղալել:

Տարիքով մարդ եր, բայց սիրում եր զրուցել ու մեկ մեկ ել կատակներ անել: Ի՞նչ վոր աշխուժություն կար մեջը: Հագնում եր հին, զինվորական կոշիկներ, վերելից ել փաթեթում վոտքերը: Իր գործատեղում միշտ կապած ուներ քաթանե սպիտակ զոգնոց,

—գործի վախում սիրում եր գործի մարդ լինել:

Կուսակցական հիմնարկության դոնապան եր Գիորգին:

Նա ջանասեր եր իր գործի մեջ, պարտաճանաչ: Շարունակ մի բանով զբաղված կլիներ: Ավելում եր բակն ու պարտեզը, մաքրում քարերից, ծառերից չորացած ճյուղերն ու տերենները պոկում, ծաղիկներին խնամք տանում, փոխում ավագանի ջուրը: Իսկ յերեմին ել, ապատ ժամերին նսառում եր պարտեղի միակ թթինու տակ ու զովանում տմառվա շոգերից:

Մի որ յերեկոյան յերը պարուղի ծաղիկներն եր ջրում նա, դարձավ ինձ. --

—Տեսնում ե՞ս, ծառի վրա մի հատ բալ չեն թողել: Հետո

ինչքան եր բռնել: Ո՞վա քաղում, չես իմանում: Ես յերեք տարի  
ա եստեղ բանում եմ, մի որից մի որ գեռ մի հատ բերանս չեմ  
դրել:

Յեվ զլուխն որորելով գարձալ շարունակեց իր գործը:  
Միշտ այդպիս եր Գիորգին: Ամենաչնչին բանը աչքին գա-  
լիս եր: Ինչ վոր իրեն եր վերապահված հետեւու, յերեք աչքա-  
թող չեր անի: Սերտ կերպով կապվել եր հիմնարկության հետ, ինչպիս  
իր սեփական տունը:

Հիմնարկության բոլոր ծառայողներս սիրում եյինք Գիորգուն,  
նա յել իր հերթին բոլորիս հետ սիրով եր ու մտերիմ:

Ազատ ժամերին գիտեր առորյա անցու գարձից, գեաքերից  
խոսել, կատակներ անել սրա ու նրա հետ: Զնայած իր տարիքին.  
նա կարողանում եր շարժել ուղեղը, հաղորդակից լինելորվա անց  
ու դարձին:

Իր աշխատասիրության համար, Գիորգին ընտրվել եր տեղ-  
կոմի անդամ և քչից շատից կարողանում եր աշխատել:

Գիորգին ինքը ցանկություն հայտնեց լիկայան հաճախելու.  
և այժմ զբանանաչ եր արդեն: Յերբեմն, ազատ ժամերին նրան  
կարելի եր տեսնել պարտեզի հեռու մի ծայրում նստած, գիրկապ  
անելով, դասը կամ լրագիր կարդալիս:

Ուրախ եր Գիորգին:

Ապրում եր գոհ իր վիճակից: Ընտանեական հոգսեր չուներ  
ինքան: Իր նման մի պառակ կին ուներ և ինամքին՝ յեղբոյք  
վորք աղջիկը:

Զավակներից վաղուց եր բաժանվել: Յերկու վորդիներից  
մեկը խեղզվել եր դեռ փոքր հասակում, իր հորեղբոր հետ  
գետում ձուկ վարսելիս: Մեծ տղան ել սպանվել եր Բագվի կովին:

Գիորգին թեպետ մոռացել եր վիշտը բայց յերբեմն միայ-  
նակ ժամերին, հիշում եր իր մեռած վորդիներին, առանձնապես  
մեծ տղին ու վաղուց մոռացված վիշտը, նորից կրծում եր նրա  
սիրտը: Հածախ այդ տխուր մոմենտներին, նա առանձին պար-  
ծանքով հիշում եր, վոր իր վորդին մեռել և բանվորների ու գյու-  
ղացիների համար: Այդ նրան միխթարում եր ու զգում եր նա իր  
մեջ վոր տղան հերոս և յեղել:

\* \* \*

Առառվա շոգերը սկսվել եյին: Հիմնարկության աշխատակից-  
ների առորյա խոսակցության առարկան եր արձակուրդները, հան-

դստյան տուն: Գիորգին այնքան ել չեր հետաքրքվում արձակուր-  
դով ու հանգստությամբ:

— Յես հեջ.—ասում եր հաճախ—մենք ցրտին ել ենք սովո-  
րել, շոգին եր Դուք, ջահեներդ զնացեք, վոր առողջ լինեք:

Հանգստյան աների սեղոնը սկսվելիս, տեղկոմը վորոշեց  
Գիորգուն մի ամսով հանգստյան տուն ուղարկել:

Ուրախ եր Գիորգին: Ուրախ եյին նաև հիմնարկության  
աշխատաղները: Գնալու որը նա յեկալ մեղ հրաժեշտ տալու:

— Հետեւիր քեզ, վոր լավ կազդուրվեն—նկատեցի յես, նրա  
ձեռքը թոթափելով:

— Տեսնենք.—առաց—թե չե ծերությունը զոռում ե:  
Եհ... հեյ՝ զիտի ջահելություն,— ավելացրեց ապա— զյուլ-  
լով վոր տայիր Գիորգուն, քար չեր անի: Մի ժամանակ քարդիչի  
զավորում վոր բանում եյի, երեք մարդու գործ ելի շինում: Հա-  
մա ի՞նչ ոգուտ... ո՞ւմ համար: Սաղ ջանս ել զնաց կյանքս ել  
հետը...

— Դեռ ջահել ես, մի մտածի Գիորգի. կերթաս հանգստյան  
տուն ավելի կջահելանաս—կատակեցի յես:

— Ե՛, ինչ ջահել ես գտել զուն ել: Ջահելը գուք եք վոր վար-  
դի պես նոր եր սկսում բացվել. մենք յերանի պիտի տանք ձեզ:

## II

Գիորգու զնալուց մի յերկու շաբաթ անց յես ել արձակուրդ  
վերցնելով ուղեկորվեցի հանգստյան տուն:

Տեղ հասնել տեղավորվելուց հետո, հետաքրքրվեցի թե ինչ  
զրության մեջ ե Գիորգին: Հետեւյալ որվա ճաշին, նրան պատա-  
հեցի ընդհանուր ձաշարանում:

Հստ յերեւութին նա չեր սպասում:

— Պա՛, բարով, բարով—ուրախացած բացականչեց նա, ամուր  
թոթափելով ձեռքս:

Բավական կազդուրվել եր: Ինչպես յերեւում եր լավ, ողն ու  
մնանուղը նրա վրա գալիս եր:

Ճաշվա ընթացքում հետաքրքրությամբ և մանրամասն հար-  
ցնում եր քաղաքից, իրեն ծանոթ զանազան անձնավորություն-  
ներից, կարծես տարիներ եր վոր բաժանվել եր:

— Լավ ե՞ս զգում քեզ այսոեղ—հարցրի յես յերբ նա վեր-  
ջացրեց իր հարց ու փորձը:

— Փա, ինչ խոսք վոր լավ:

— Լավ ե՞ն կերակրում:

—Թագավորի պես: Առավոտներն, ախարեր ջան, տալիս են կաթ, մի երկու ձու, սպիտակ հացով կարագ—շարեց նա իբար յիտեց—ճաշին ել յերկու, ենեց վախտ և լինում, իրեք ըլուզից կերակուր, իրիկունել իրա դայդին:

Ճաշը վերջացնելուց հետո նա առանձին ախորժակով մի յիրկու բաժակ ջուր խմեց ու սղալելով բեխերը բացակածեց:—

—Լա՛զաթ:

—Զեյեր ուզի՞, Գիորգի, վոր կյանքում միշտ եսպես հեշտ ու լավ լիներ ասլուլը—կատակով հարցրի յես, յերբ ճաշեցինք և դուրս լեկանք:

Նա ծիծաղեց իր բարակ նուրբ ձայնով և զլուխն որորելով աջից ձախ ասաց—

—Մաղալու մարդ ես, իմ արել:

—Զե, կատակը մի կողմ—պնդեցի յիս:

—Ե՛, ախարեր ջան, ուզենալն, ինչի չեյի ուզի վոր: Յես ել կուզեյի, զու ել կուզեյիր, մեկն ել ու միուսն ել: Համա վո՞րտեղից: Մինչև չաշխատես, չալիշ չտաս, վո՞րտեղից կարաս եղանակը:—այժմ բավական լուրջ կերպով ասաց նա:

Յես նորից հակաճառեցի, պնդելով, թե այժմ մերն և իրավունքը, պետք ել լավ ասլունք:

—Մինչև նեղ որ չքաշես, լավ որ ըսկի չես ահանի. սա աշխարհի որենքն ե, —ճանը կերպով ասաց Գիորգին:

Դանդաղ քայլերով անցանք ծառուղու խորքը: Զնայած որվածամբին ողը բավական զով եր: Շուրջը նկատելի իր մաքրություն, ինամբով մշակված բույսեր ու ծաղիկներ:

Այնուհետև Գիորգին մի քանի բան ել պատմեց իր ամառանցային կյանքից, թե կարդում են, դաստիսություններ, կինու և ներկայացումներ ել լինում:

—Բակի չենք իմանում որերը վոնց են անցնում—ավելացրեց վերջը:

### III

Որը կիրակի եր:

Թեպետ ամառանցավորների համար ամեն որ կիրակի յի, բայց ամառանոցի կիրակին ել իր բնույթն ունի:

Վաղ առավոտից բոլորը, վերցնելով իրենց հետ ճաշվա ու տելիքը, քաշվել ելին անտառ: Ամեն կողմ լսվում եր յերգի նվազածության ձայներ: Վայրենի ու փարթամ անտառն ուրախ եր ամառանցավորներով:

Յերկար զբոսնելուց հետո, անտառի խորքում հանդիպեցի

Գիորգուն: Նոտած մի հաստարուն յեղենու տակ, նա յերկու ձեռքով գրկել եր ճնշներն ու աչքերը մի կետի հասած, զիտում եր հեռուները: Հստ յերկույթին նա խորասուզված եր ծանր մտածմունքների մեջ ու չսկց քայլերիս ձայնը: Յերբ բարեկցի, նա սթավովեց, թողեց գրկած ճնշներն ու նայեց իմ կողմը:

—Դիորդի, ինչի մասին ես մտածում:

—Աշխարհի խեր ու շառի—մպտալով պատասխանեց նա:

—Ենքան ել չարժի մտածել, առանց խերի շառ չկա, առանց շառի յել՝ իսկը—ճգիկելով նրա կովկին նկատեցի յիս:

—Եղակս ա, զրուստ ա... Պառալիլ ենք. մի մի անգամ դարդը պատում ա: Մտածում եյի անցած գնացած որերի մասին:

Գիորգու քեզը յերեռում եր տեղը չեր:

Ինչ վոր թախիծ եր պատել նրան:

—Նոտած մտածում եյի, մեկ ել միտս եկալ, թի ինչպես մի ժամանակ ես անտառներում միծ տղիս հետ բանում եյինք: Ծառեր եինք կորտում ու զրգում քաղաքի զավողներին: Քանի՛ անգամ ա ջանս ջարգվել ծառերի տակ մնալուց... Նա զլուխն որորեց վերեկց ներքեւ ու մի հոգոց հանեց:

—Շատ անխիզ եյին բանեցնում—զանգաղ կերպով շարունակեց նա—Տղիս քանի՛ անգամ կավեց խաղեյինի մարդկանց հետ... Ուղում եյին բանել, փախավ զնաց Բագու: Յես ել մի որ փիս ջարգվածքներ ստացա: Ե ամիս պառկեցի. վոր լավացա ել զործի չնդունեցին:

—Եղ ժամանակից արգեն տղետ Բագվումն եր հա՞:

—Հա: Գնաց մնաց ենաեկու: Քանի անգամ նամակ զրեցի, թի այ վորդի արի, յիս պառավել եմ, հիվանդ եմ, արի տուն ու տեղին մտիկ արա: Ականջ չղրեց: Մի մի ժամանակ մենակ փող եր զրգում: Հետո յերկար ժամանակ խաշար չունեյի: Վերջն ել կրասնարմեցիների մենձ եին արել Բալշեկիլ եր...

Գիորգին վշտանում եր: Անցյալի հիշողությունները պատել եյին նրան:

—Վոչինչ, մի մտածի, տղեդ լավ գործի համար մեռավ, —ուղեցի մխիթարել յիս:

—Զե, վորթի, ի՞նչ մտածեմ ել: Նա մեռավ բանվոր, խեղճ ժողովրդի համար, վոր նրանք լավ որ տեսնեն: Լավ կյանքի համար պիտի կովես զուշմանիդ հետ: Իսկ կովի մեջ հալբաթ վոր մարդ կմեռնի: Ո՞ւմ տղեն չի մեռել վոր: Համա ետ չեմ ասում և —առաջ զնաց նա—Այ, տես, մազերս սպիտակի ա, հիսունից վարուց եմ անցել: Եսոր կամ, եղուց չե: Են եմ ասում, թի ի՞նչի

մի 10-15 տարվա կիւանք չկա առաջներս, վոր կարողանանք ապրել, մի գործ շինել, վոր աշխարհից բեխարար չգնանք: Յետ թե չեմեկն ելա չկա, վոր վառ պահի են ոջախի ճրակը, վոր ասեն հա, ես ել խեղճ ու նաշար Գիորդու ոջախն ա: Աղիկ տղայ եմ տվել լավ կյանքի համար... բա մեկը չի նրա գործը շարունակողը: Մենք ել մարդ ենք յեղի մեզպիսների շարքում. բա մեկն ելա չի իմ ոջախի կողմից ես աշխարհում մասնակից ըլողը...

—Բոլոր բանվոր, աշխատավոր դասի ոջախը մեկ և Գիորդի, քո և իմս չկա:—Նետեցի յես:

—Հը... դրուստա... քո և իմս վորն ա. թող իմ ոջախս մարի, համա բանվոր պասակարդի աջախը մանմար ա, անմար ել կըմա: Ախար եղ ել չի յե... եղ չիմ ասում:

—Բա ի՞նչ:

—Են, վոր յես ել եմ ուզում ապրել ետ մեծ ոջախում... Դրուստա, կասես վոր կամ, ապրում եմ: Գիրեմ, մի քանի տարի ել կապրենք. համա զիփ մեկ ա, աշխարհից բեխարար կերթանք... ուշա... բան չի դուրս գա... Եհ... եհ, վոչ մեռանք են դառն որերին, վոչ ել աչքներս բաց արինք ես նոր կյանքի շեմքին... վոչ ես, վոչ են...

Ծերունին խորհում եր:

Նա հոգեկան ուժեղ հուզումների մեջ եր: Մաքերը մեկը մյուսի յետեղ խոնվել եյին նրա փոքրիկ ուղեղում և ուզում յեյին լուծվել:

—Մենակ հո լավ ուտելն ու ապրելը չի վոր, դանդաղ շարունակեց նա—մարդ մի քիչ ել աշխարհից տեղեկություն պիտի ունենա, մի բան շինի... Աչքներս բաց ենք արել թե չե, դառն որով մի թիքա հաց ենք դադել ու կերել, առանց մի բան իմանալու... Եհ, վորդի, ասել եմ ու ելի կասեմ՝ երնեկ ձեզ վոր վարդի պիս նոր եք բացվում ես կյանքում... համա մենք, մաշվեցինք են սև որերի գններին ու հո նոր կյանքի մենակ ծեղը տեսանք...

Յետ նայում եյի նրա թախծոտ և կնճիռներով ծածկված դեմքին: Թվաց թե առաջին անգամն եյի տեսնում Գիորգուն: Նրա կնճիռները կարծես ուզում եյին հարթվել, ժպտալ: Նայում եյի նրա վտիտ մարմնին, վորը քիչ առաջ եր կուցել հաղթ յեղենու տակ և չգիտեմ ինչու, նա ինձ վրա ուշ աշնանը կարծես կիսարաց մնացած ծաղկի տպավորություն թողեց...

## IV

Յերեք որ եր Գիորգուն չեյի տեսել:

Հետաքրքրվեցի: Գտա հիվանդ: Պառկել եր մահճակալի վրա: Ծածկվել եր մի բարակ վերմակով, վոտքերի կողմն ավելացնելով և վերակուն: Գլուխը կապած եր: Շառագունված դեմքից յերեսում եր, վոր տաքության մեջ ե:

Յերբ ներս մտա, նա բացեց աչքերն ու նայեց ինձ: Շնչառությունը շատ ծանր ու անկանոն եր: Հազում եր չոր և անդադար լուսում չորացող շրթունքները:

—Գիորդի, ի՞նչ ե պատահել, ինչո՞ւ յես հիվանդ—հարցը ի յս նստելով կողքին:

—Ի՞նչ գիտեմ—շնչալով խոսեց նա—տաքություն ունեմ. կողմ ծակում ա. են որը պոաժեկտոր եյինք զնացել. ախմախություն արի հետո բան չվերցը: Գալիս փիս անձռւ բռնեց. մինչ տուն հասա, թրջվել եյի: Հանվեցի քննեցի. գիշերն ել դու մի ասա ակոշկեն բաց են թողել... Առավոտյան ուզում եմ վեր կենալ, մեջքս տախտակ ագառել, զլուխս ել բարձից չի պոկ դալիս: Ես երկու որ ա եսենց եմ...

—Հետո, բժիշկ բանի իմաց ես տվե՞լ:

—Հա: Ասել են... եսոք պիտի գա: Ուզում են բալնիցա տանել. համա չեմ ուզում... Բանը վոր բալնիցի ընկավ, վեր կենալը դժար ա:

—Բան չկա—նկատեցի յես—մըսել ես կանցնի:

—Գիղեմ վոր բան չկա... Նատ եսենց հիվանդություններ եմ քաշել: Ենենց ենք բարակել, վոր ասեղի ծակով անցնելու յենք յեղել, բայց չենք մենել, ելի լավացել ենք: Համա... ես անդաս սիրաս ինչ վոր մի փիս բանա ասում... վայ թե... տանի: Պառավել եմ, չեմ կարա ցավին հղթել... Համա լավ կանես, թե վոր նեղություն չի լինի քեզ, ասես վոր ինձ քաղաք տանեն... ենդեղ կըլավանամ...

Յես խոստացա վոր կանեմ: Նա շուռ յեկավ կողքին, վերցը մոտի աթոռին գրած ջրով լի բաժակը, խմեց մի փոքր, ապա նորից պառկեց, աչքերը կիսախուփ, մի թեթև հառաջանք արձակելով:

Ներս մտավ բժիշկը: Նա յերկար քննեց հիվանդին և ապա չոր կերպով ասաց:—

—Պետք ե հիվանդանոց տեղափոխվել...

Գիորգին ուզեց մի բան ասել. յերեխ այն, վոր ինքը չի կամնում գնալ հիվանդանոց, բայց լոեց ու նորից պառկեց:

\* \* \*

Յերեք որ եր Գիորգին հիվանդանոցումն եր:

Չսայած կանոնավոր լրջկության և խնամքին, բայց և այնպիս նա որ ավուր ծանրանում եր:

Մըսել եր փիս և թոքերի բորբոքում սաացել, Նըտ վախոս մարմնի հանդեպ ցավը շատ զորեղ եր և որ ավուր մաշում եր:

Որը մի քանի անգամ այցելում ելի՛ նա շատ քիչ եր խռովում: Խոկ յերեմն տաքության մեջ չեր ճանաչում ինձ:

Մի անգամ միայն աչքերը բացեց, նայեց դեմքիս ու քիչ հետո շշնջաց:—

— Տեսա՞ր... վոր ասում ելի ես անգամ ինձ կտանի...—ապա յերկար լուսությունից հետո շարունակեց—վերջացավ. մարեց ոջախը... Ու՞մ ինչ, թե Գիորգի յեկավ աշխարհիս յերեսը... ապրեց, գնաց... Առաջուց չմեռանք... Դառն ու նեղ որ քաշեցինք, եկանք եստեղը հասանք... հիմի ուզում ենք մի շունչ քաշել, մի կուշանայել ես կյանքին, են ել մահն և չորում դոշներիս... Բա, բախաւա... աշխարքի բան...»

Հաճախ նա զառանցնում եր և մի քանի կցկոուր բառեր ելին դուրս գալիս բերանից: Շարունակ հազում եր՝ թույլ, դադարկ կարասի արձագանքի պիս: Ուշքը վրան յեղած ժամանակ նա շարունակ դիմում եր վոր իրեն քաղաք տեղափոխեն:

\* \* \*

Զորբորդ որվան առավոտյան յերը զնացի նրան տեսնելու, ասացին, վոր մեսել ե...»

Յեյի մի բոպե ցնցվեցի:

Զեյի հավատում, թեպես համողված ելի վոր կարող և մեսնել...

Նույն որը յերեկոյան Գիորգու դիյակը ուղարկեցին Թիֆլիս: Մի քանի հոգի ելինք միայն ուղեկցում դադալին մինչեւ յերկաթուղու կայարանը:

Ծանր ու ճնշող եր այդ անշուը թաղումը:

— «Սաղ կյանքներս մաշեցինք հին որերի դոներին, իսկ ես լավ կյանքի մենակ ծեղը տեսանք»—այսքանն ելի միյան հիշում նրա ամբողջ կյանքից ու մտածում թե վո՞րքան ուժող եր այդ մարդու մեջ նոր կյանքով ապրելու տեսչը...»

1925—Թիֆլիս



ՀՀ Ազգային գրադարան



NL0382854

ԳԻՒԸ ՅՈ Կ.

ՏՎԵՐ

1  
2

Сборник ассоциации пролетарских писателей-армян Северного Кавказа, изданный краевой газетой „Мурч-Мангах“ и СКАПП'ом.